ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԳԱԳԻԿ ԱԴԻԲԷԿԵԱՆ ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ

Փառք ենք վերառաքում առ Ամենակալն Աստուած, որ ամենուր մեր ժողովրդի զաւակաց հոգիներում զօրեղ է հաւատը եւ մշտարթուն սէրը՝ հանդէպ ազգային ու եկեղեցական մեր աւանդներն ու սրբութիւնները:

Բարձրեալ Տիրոջ կամքով առիթն ենք ունեցել ճանաչելու հաւատաւոր հայորդուդ եւ Ձեր գովարժան գործունէութիւնը: Ձեր նուիրեալ եւ հաւատաւոր ընթացքը զարդարեալ է Հայրենիքի եւ մեր ժողովրդի հանդէպ սիրով իրագործուած աստուածահաճոյ ձեռնարկներով: «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցով Դուք տարիներ շարունակ ծառայում էք հայրենաշինութեան գնահատարժան գործին՝ յանուն Հայաստանում եւ Արցախում կեանքի բարգաւաճման ու առաջընթացի: Դուք գովարժան աւանդ էք բերել նաեւ Հայրենիքում հոգեւոր կեանքի պայծառութեանը՝ սրտաբուխ յանձնառութեամբ Ձեր վաստակը ի սպաս դնելով Մասիսում Սուրբ Գէորգ եկեղեցու կառուցմանը:

Ուրախ ենք մեծապէս, որ Դուք ազնիւ ջանադրութեամբ արդիւնաւոր նպաստ էք բերում Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի գործունէութեանը: Մշտապէս զօրակից լինելով Թեմական Առաջնորդին ու հոգեւոր դասին՝ իրենց առաքելութեան մէջ, Դուք սիրով յանձն առաք նաեւ ազնիւ ընծայաբերումով մասնակից լինել Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ համալիրի կառուցման աստուածահաճոյ գործին: Գոհութեան աղօթքն է Մեր հոգում, որ Տիրոջ օրհնութեամբ եւ հաւատաւոր Մեր զաւակներիդ ներդրած անսպառ ջանքերով ու պատրաստական զոհողութիւններով դէպի երկինք խոյացաւ հայկական ճարտարապետութեան աւանդներով կառուցուած եկեղեցին, եւ այսօր Տիրոջ ողորմութեամբ իր յարկի ներքոյ է միաւորում բարեպաշտ մեր ժողովրդին:

Բարձր գնահատելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում Ձեր վաստակը, սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Վստահ ենք, որ նոյն եկեղեցասիրութեամբ ու քաջեռանդ ոգով պիտի շարունակէք

Ձեր հաւատքը վկայել Ձեր ազնիւ ու բարեպաշտ կեանքով եւ նորանոր առաքինի իրագործումներով:

Աղօթում ենք, որ Ամենակալ Տէրը շնորհի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին կեանքի քաջառողջ ու արեւշող բազում օրեր, ամենայն բարիք եւ նոր յաջողութիւններ:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 766